

Փոթին, Ախցխան և Ախլքալաքը իր շրջակայ գիւղերով, ու Կարինի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսը Օսմանցիներու վրէժխնդրութենէն վախնալով ու իրենց կրած հարստահարութիւններէն յուսահատուելով, 1830ի ամառը 90,000 Հայ Կարինէն, Կարսէն ու Պայազլուէն դուրս բերաւ, որոնք եկան բնակուելու Անդրսանդրապոլի և Ռուսաց նոր գրաւած գաւառները. այդ ժամանակ ուրիշ պատկեր կը ներկայացնէր Հայաստանի մնացեալ մասը...»

Արդէն մինչև Սասունի ամիրայութիւնը և Օսմանցիներու տիրապետութեան սկիզբը, Հայերն ու Քիւրդերը չեն ունեցած ազգային կրօնական և ուրիշ թշնամական վերաբերումներ իրար հանդէպ, բայց ի իշխանութեան ձգտումներէ, որ Հայ սնահաւններն ալ ունեցած են իրենց կարգին Հայ ազգին դէմ:

Եւ երբ մինչև այդ ժամանակ անորոշ էր իրենց մէջ կրօնական և ազգային գոնաւորումն, տնտք բնակաւնորէն մօտիկ և բարեկամ բնակակիցներ էին ու երբեմն իշխողներ, իսկ երբ Օսմանցիներու տիրապետութեան շարունակութեամբ ընդունեցին իսլամական կրօնը, և իրենց մէջ չեղաւեցաւ ցեղականութեան զգացումն ու կրօնական տարբերութիւնը, առիթ եղաւ որ տնտք իրարմէ հեռանան ու թշնամանան մինչև անդամ. որովհետև այդ ժամանակի քաղաքականութիւնները զուտ կրօնական, ազգային տիրապետութիւն էին:

Ք Ի Ի Գ Ե Բ Ո Ի Կ Ի Ս Ա Ն Կ Ա Խ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

(Սահմանագլուխներ պահպանելու յասկացուած մշական միլիցիայի (Milice) մինակը. Հայ նախարարութիւններու մէջ եւ Քիւրդ նախնիներու նախարարութիւնները. Հայերու հետ իրենց զինուորական կապը ի հնումն.)

«H. F. B. Lynch»ի «Armenia» գրքէն պատմական կտոր մը է, Օսմ. իշխանութեան տակ իրենց ժառանգած իրաւունքներու մասին, որոնք այն օրէն զրուած կը մնան կիսանկախ վիճակի մէջ: